

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 34/6

1 սեպտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Կոնվերս Բանկ» ՓԲԸ 29.07.2015 թ-ի վարչական բողոքը ՀՀ ՖՆ խոշոր հարկ վճարողների ՀՏ պետի 22.07.2015 թ-ի թիվ 291629 որոշման դեմ:

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ բողոքում բերված փաստարկները.

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության պետի կողմից 22.07.2015 թ-ին կայացվել է թիվ 291629 որոշումը (այսուհետ նաև Որոշում), համաձայն որի «Կոնվերս Բանկ» ՓԲԸ (այսուհետ նաև Ընկերություն) գործադիր տնօրենը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամի չափով:

Ընկերությունը գտնում է, որ Որոշումը չի բխում ՀՀ օրենսդրության պահանջներից և ենթակա է վերացման հետևյալ պատճառաբանությամբ:

Որոշման համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի պահանջով Ընկերությունը սահմանված ժամկետում չի վճարել շահութահարկի կանխավճարը:

Իրականում, որևէ խախտում թույլ չի տրվել հետևյալ նկատառումներով:

Համաձայն 2014 թ-ի շահութահարկի հաշվետվության (ներկայացվում է կից) 2015 թ-ի շահութահարկի կանխավճարների եռամսյակային գումարը պետք է կազմեր 66.461.527 ՀՀ դրամ:

2015 թ-ի 1-ի կիսամյակի կանխավճարը պետք է կազմեր 132.923.054 դրամ:

2015 թ-ի 1-ի եռամսյակի համար 16.03.2015 թ-ին կատարվել է 47 մլն դրամ կանխավճարի վճարում: Մարտի 15-ը եղել է ոչ աշխատանքային օր, իսկ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածի, եթե ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը: Այսինքն, 2015 թ-ի 1-ի եռամսյակի համար վճարումը կատարվել է սահմանված ժամկետում:

2015 թ-ի 2-րդ եռամսյակի համար 15.06.2015 թ-ին վճարվել է 87 մլն դրամի չափով կանխավճարի գումար: Այսինքն, Ընկերությունն իրականացրել է 134 մլն դրամի չափով կանխավճարի վճարում 2015 թ-ի առաջին և երկրորդ եռամսյակների համար (վճարման հանձնարարագրերը կցված են):

Համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ կետի կանխավճարների մուծումները կատարվում են յուրաքանչյուր եռամսյակ, յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 15-ից ոչ ուշ:

Ընկերությունը հայտնում է, որ 2015 թ-ի 2-րդ եռամսյակի կանխավճարը կատարվել է 15.06.2015 թ-ին: Ընդ որում, փոխանցումը Ընկերության թղթակցային հաշվից դուրս է եկել նույն օրը ժամը 14:29-ին, իսկ փոխանցման հաստատումը ստացվել է նույն օրը ժամը 16:19-ին, հետևաբար կանխավճարի փոխանցման ժամկետի խախտում չի կատարվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ղեկավարվելով ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 286-288, 293 հոդվածների, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63, 67, 70, 75-77 հոդվածների դրույթներով, Ընկերությունը խնդրում է բեկանել Որոշումը և կարճել վարչական վարույթը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ խոշոր հարկ վճարողների ՀՏ պետը, քննելով 22.07.2015 թ-ի թիվ 918 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի վճարել 2015 թ-ի 2-րդ եռամսյակի շահութահարկի կանխավճարի գումարը: Արդյունքում, ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի, 244.2-րդ, 281-րդ հոդվածների և 282-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով 22.07.2015 թ-ին կայացվել է թիվ 291629 որոշումը, որով Ընկերության տնօրենը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.3-րդ հոդվածի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամի չափով:

Նշվեց նաև, որ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի 2015 թ-ի 1-ին եռամսյակի շահութահարկի կանխավճարի գումարը կազմել է 41.007.571 դրամ:

16.03.2015 թ-ին ընկերության կողմից կատարվել է 47.000.000 դրամի վճարում, որպես 2015 թ-ի 1-ին եռամսյակի շահութահարկի կանխավճար: Արդյունքում առաջացել է 5.992.429 դրամի գերավճար:

2014 թ-ի շահութահարկի տարեկան հաշվարկը ներկայացնելուց հետո Ընկերության մոտ շահութահարկի գծով առաջացել է 354.461.480 դրամի պարտավորություն, հետևապես նշված 5.992.429 դրամ գերավճարի գումարը ուղղվել է այդ պարտավորության մարմանը:

Հարկ է նշել, որ 2014 թ-ի շահութահարկի տարեկան հաշվարկը ներկայացնելուց հետո ընկերության 2015 թ-ի եռամսյակային կանխավճարների գումարի չափը կազմել է 66.461.527 դրամ:

Տվյալ դեպքում Ընկերության 2015 թ-ի 2-րդ եռամսյակի շահութահարկի կանխավճարի գումարի չափը կազմել է 66.461.527 դրամ, սակայն վերջինիս վճարման ժամանակ, այն է՝ 15.06.2015 թ-ին, առաջացել է նաև 1-ին եռամսյակի համար թեր վճարված կանխավճարի վճարման պարտավորություն՝ գումարով 25.453.956 դրամ (66.461.527-41.007.571=25.453.956 դրամ):

Վերը բերված փաստական հանգամանքներից հետևում է, որ ընկերությունը 15.06.2015 թ-ին պարտավոր էր վճարել ընդամենը 91.915.483 դրամ (66.461.527+25.453.956=91.915.483) շահութահարկի կանխավճարի գումար, սակայն փաստացի վճարել է 87.000.000 դրամ, այսինքն՝ 4.915.483 դրամով պակաս գումար:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ՖՆ խոշոր հարկ վճարողների ՀՏ պետի 22.07.2015 թ-ի թիվ 291629 որոշումն ընդունվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ խոշոր հարկ վճարողների ՀՏ պետի 22.07.2015 թ-ի թիվ 291629 որոշումը թողնել անփոփոխ, իսկ բողոքը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ